



ՌՅԻԱ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

(Տես երես 257):

Որչափ ալ այս ամեն յիշեալ աշխարհք և պետութիւնք Շնորհալուոյ պատմական շրջանա-
կին մերձագոյնք՝ են տեղեալ և պատահմամբ դի-
պաց, յայտ է որ իր և մեր բնիկ հայրենի աշ-
խարհն չեն. հարկ է հարեանցի աչք մ'ալ տալ
այն մեր մեծ և հին տարաբաղչ աշխարհին, — մա-
նաւանդ թէ տարաբաղչիկ որդւոցս բարեբաղչ
աշխարհին, — զոր մեր ստոյգ պատմութեան դա-
րուց կիսէն 'ի վար աւելի օտար ազինք վարեն և
վայելեն՝ քան բնիկքս օտարացեալք պանդխտու-
թեամբ յորորոս երկրի: Շնորհալուոյ դարն եր-
կուց ժամանակաց միջոց և որոշիչ կէտ մը կըրնայ
ըսուիլ, յորում գեռ հին հայկական հարստու-
թեանց մնացորդք կային և առ փոքր փոքր կ'ան-
հետանային, որով կերպարանափոխ կ'ըլլար հին
Հայութիւնն, և Հայաստանն՝ 'ի Թուրքաստան,
Թաթարաստան և Քրդաստան: Յետ բարձման Ար-
շակունի Թագաւորաց մերոց՝ Սասանեանց տիրա-
պետութեան միջոց (428-638), թէ և ինքնագլխու-
թիւն չունէին Հայք՝ այլ իրենց նախնեաց օրինօք,
սովորութեամբք և պայազատութեամբք կ'ապ-
րէին. իւրաքանչիւր նախարար և սեպուհ կը յա-
ջորդէր իր հօր գահուն և պատւոյն: Արաբացիք

ալ 'ի սկզբան Թողուցին անոնց կտրգերը և սովո-
րութիւնները. բայց ատեն ատեն՝ որ և է պատ-
ճառաւ՝ շատ փոփոխութիւններ ըրին, և ը դա-
րուն սկիզբները շատ հին նահապետութիւններ
ջնջեցին. իսկ 'ի կէս Թիւ իրենց Թուրք զօրավա-
րոց առաջնորդութեամբ, որպիսի էր սոսկալի
Գարա Բուղայն, շատ ալ արիւնհեղութեամբ՝ վեր
վար ըրին զաշխարհը, և շատ տոհմեր և պայազա-
տութիւններ բոլորովին մարեցին: Այլ այնքան
արիւնէն և կրակէն դուրս ցայտեցին քանի մը
առաքինի և կտրիճ պայազատք նախարարաց. և
նոյն Թ դարուն վերջերը կանգնեցաւ Բագրա-
տունեաց Թագաւորութիւն մը, և հետ զհետէ
Թագաւորութիւնք Արծրունեաց, Սիւնեաց, Ա-
ղունից, Վանանդայ, Ջորոյգետոյ, և այլն. որք
Ժ և ԺԱ դարուն մէջ բաւական փառօք և բար-
գաւաճանք կը փայլէին. թէ և տեղ տեղ ալ ի-
րենց մօտ Արաբացի և Թուրք կամ Պարսիկ մանր
պետութիւնք կամ կուսակալութիւնք կային, Պաշ-
տատու ամիրապետին իշխանութեանէն կախ կամ
անկախ: ԺԱ դարուն կիսուն մօտ Սկիւթացի Սէլ-
ջուկեան Թուրքք յայտնուեցան, և շուտ յառաջ
գալով՝ յարձակեցան 'ի Հայաստան, և անուր

անգթութեամբ հուր և սուր սփռելով տակնու-
վայ ըրին զաշխարհն, նուաճելով մի ըստ միով
զԱնի, Կարս, Արծն, և ուրիշ իշխանանիստ և ե-
րեւելի քաղաքներ, յորոց զոմանս ալ յաւեր և
'ի մոխիր դարձուցին: Այս ատեն, կամաւ և ա-
կամայ Հայ թագաւորք թողին իրենց աթոռները,
Անեցիք, Կարեցիք, Վանեցիք (այսինքն Սենեքե-
րիմեանք կամ Արծրունիք), և գաղթեցին 'ի Փ.
Հայս կամ 'ի Փ. Ասիա, Յունաց կայսերութեան
մէջ իրենց տատանեալ տունը հաստատել ուզե-
լով, ուր և մէկ ցեղ մը չանցած՝ գրեթէ ամենքն
ալ մարեցան, և անոնց մոխրէն վեր ելան Ռուբի-
նեանք 'ի լեւրինս Տաւրոսի և 'ի գոգս Կիււիկիոյ,
'ի վերջ ժա. դարու:

Յաջորդ ժ.ի դարուն՝ բուն մեր Շնորհաւոյն
ժամանակ՝ թէ և գրեթէ բոլոր Մեծն Հայաստան
թուրքաց և խառնազանձից ղէնքերով պաշարեալ
և ցցուեալ էր, մանաւանդ միջնաշխարհն, այլ
գեռեղէքները կային նուազեալ պայազատք Հայկ-
ազն փարազանց, և նաև թագաւորք ոմանք, ո-
րոց պատմութիւնն ալ ժամանակին տիրութեան
մէջ մթնցեր է. այսպիսիք են սերունդք և շառա-
ւելք Զորոյգետոյ Բագրատունեաց, որոց հարքն
Անոյ թագաւորներէն զատուելով Տաշրայ (Լուի)
կողմերը առանձնակ թագաւորութիւն մը հաս-
տատել էին. իսկ որդիքն անկէ հեռանալով Գու-
գարաց և Ուտիոյ հին նահանգաց իրարու սահ-
մանակցութեան կողմերը՝ երկու փոքրիկ թա-
գաւորական աթոռներ գրին, 'ի Տաւուշ և 'ի
Մածնաբերդ՝ ամուր բերդաւաններ, և որդւոց
որդի յաջորդութեամբ՝ շատն Կորիկէ (կամ Գուր-
գէն) անուամբ՝ ինչուան ժ.ի դար ալ հասան. Կո-
րիկէ Գ կամ Գ յիշուի 'ի կէս ժ.ի դարուն և ալ
վերջերը, որոյ որդին Աբաս թագաւոր 19 տա-
րուան վախճանեցաւ. ասոր թոռն Կորիկէ 'ի կամ
Ե յիշուի ժ.ի դարուն կիսուն մօտ, յորում թա-
գարաց հզօր տէրութիւն կոխեց ամեն թագ և դահ:
— Յիշեալ Ուտի նահանգին և Արցախոյ կողմերը
թագաւորութիւն մ'ալ կար Աղաանից անուամբ,
բայց պայազատքն Հայ էին լեզուաւ և կրօնիւք.
անոնցմէ ծագեցան Սաւելոյ իշխանքն ալ, որ բա-
ւական ազատութեամբ պայազատէին ժ.ի և ժ.ի
դարուց միջոց, և որոց սերունդք իշխանական ա-
նուամբ կամ պանծանօք գեռ շատ դարեր ալ տեւե-
ցին, և ինչուան հիմայ ալ թերեւս գտուին ազ-
նուական շառաւիղքն:

Ասոնց դրակից են Հայոց ամենէն հայկազնեան
մէկ աշխարհին՝ Սիւնեաց՝ պայազատք, որք մեր
ժ.ի դարունն մէջ ալ իրենց նախորդ դարուն ըս-
կիզբը կանգնեալ թագաւորութեան յաջորդու-
թիւնը պահեցին, Այրուանից թագաւորազանց
հետ ալ խնամենալով, մինչև 'ի ժամանակս կա-
թողիկոսութեան Շնորհաւոյ. վերջին պայազատն
եղաւ թագուհի մը Կատա անուամբ, որուն փե-
տայացեր էր Հասան խաչնեցին. և միայն Կա-
պանոյ բերդը, քանի մ'ալ ուրիշ բերդեր մնա-
ցեր էր ձեռուընին, 'ի յափշտակութենէ թուր-
քաց, որոց դէմ կենալ անկարելի տեսնելով՝ յա-
մին 1169 թողուցին տեղերնին և քաշուեցան 'ի
խաչէն:

Բագրատունի թագաւորաց բնավայրն յետ
անցնելու 'ի ձեռս Յունաց (1046) և քիչ ատենէ
'ի սուր թուրքաց Ալփաւանայ (1066), թուրք

ամիրայի մը առանձին կուսակալութիւն եղաւ.
Շնորհաւոյ երկասարգութեան ատեն Վիրք տի-
րեցին Անոյ՝ Հայոց հրաւիրանօք (1124), այլ նո-
րէն թողին առջի տէրերուն՝ պայմանօք. 1161
նորէն նուաճեցին, և դարձեալ թողին և առին,
և Օրբելեան հին ցեղի ազնիւ իշխանաց յանձնե-
ցին. և երբ զասոնք հալածեցին իբրև դաւաճանս՝
(1177) յանձնեցին Զաքարեանց Հայ մեծազօր ի-
խանաց, որք Երկայնաբազուկք Կ'ըսուին, և
ինչուան հիմայ գտուին իրենց պայազատքն 'ի վ.բ.
րահայս. ասոնց ձեռքը մնաց և Անի, և շատ շն-
ցաւ, մինչև որ Թաթարք խլեցին (1239) շատ ա-
րեան հեղութեամբ և աւերածով: Յիշեալ Զաքա-
րեանք, մանաւանդ երկրորդն հարազատքն՝ Զաքա-
րիա սպասաւոր և իւանէ Աթաբէկ՝ Վրաց թա-
գաւորութեւն սիւնք և վարիչք՝ Թամարայ թագու-
հոյ և յաջորդին ատեն, գրեթէ Մեծ Հայոց մեծ
մասն ազատեցին յալազգեաց ձեռքէն, և թագա-
ւորաբար իշխէին: Հայոց հին մայրաքաղաք Դուին
ալ առին, ուր գեռ Պարսիկ տիրապետք գտուե-
ին, ինչպէս նաև 'ի ժամանակի նահատակութեան
Յովսէփայ Նոր Վկայի (1170), զոր յետոյ պիտի
պատմեմք: Առ ժամ մի տիրեցին և Կարնոյ, ուր
Պարսիկ ցեղ մը տիրէր շատոնց, և 1160թ Սէլ-
քեան տոհմի մը ձեռք անցեր էր:

Տուրուքերան և Վասպուրական մեծ և հին
հայկական աշխարհաց մէջ ալ կային առանձնակ
իշխանք և տէրութիւնք. Վանայ ծովուն արևմե-
տեան հիւսիսային ծայրը՝ Խլաթ քաղաքն իր շը-
րակայիւք՝ շատոնց թագաւորանման Արաբ կամ
Պարսիկ տիրապետ մ'ունէր Շահ-Աբդէ կոչուած,
յորոյ աթոռն երբեմն և Հայ մը նստաւ. և բոլոր
ժ.ի դարու միջոց ալ կար այս տէրութիւնս, և
բաւական ոյժ ունէր: — Իրեն մօտ Մանգիւթ
քաղաքն ալ ժ.ի դարուն մէջ նման առանձին տը-
ր մ'ունէր, այլ յետոյ միացաւ իշխանութիւն Շա-
հ-Արմէնին:

Վանայ արևելեան և հարաւային կողմերը մի-
ջինգարեան Հայոց՝ (յետ Երևակայ թագաւո-
րաց) ամենէն նշանաւոր թագաւորութիւնն կար
Արծրունեաց ըսուած, զոր կանգնեց խորագէտն Գա-
գիկ 'ի սկիզբն ժ.ի դարու, և իր երէք յաջորդք
տեւեց մինչև ցամա 1022, յորում Սենեքերիմ թա-
գաւոր վախնալով Նեոտոցաց (Թուրքաց) ասպա-
տակութենէն, և Մեծին Ներսիսի անուամբ եղած
մարգարութենէն, երկիրը Յունաց կայսեր ծա-
խեց, և փոխան առաւ զԱբաստիա՝ սահմանօքն.
այլ իր ազգականներէն մէկն Խեղենեկ կամ Շե-
ղենիկ անուամբ՝ Ամիւկ ամուր բերդին մէջ հաս-
տատ կեցաւ, և ինքզինք թագաւոր անուանեց,
նոյնպէս և ոմանք 'ի պայազատացն. յորոց էր
Արզրմսէհ Պրոտո-Կուրոպալատ (+ 1121), փե-
տայացեալն 'ի Մարիամ քոյր Մեծի Վկայսիրին
մերոյ. իր թոռն Խեղենեկ Բ յիշուի 1199թ, ու-
րիշ Խեղենեկ մը հարիւր տարի ալ վերջը. իսկ
իրենց պայազատքն մինչև 'ի սկիզբն ժ.ի դարու,
յորում գեռ թագաւորութեան անուն ալ յի-
շուի՝ մինչ 'ի Կիււիկիա անգամ կորսուեր էր Հա-
յոց թագն:

Վասպուրականի և Արծրունեաց դրակից ալ
խարհին՝ Տուրուքերանոյ մէջ՝ երկու անուանի
դաւաղք կան, որք աւելի երկար ատեն հայկական
իշխանութիւն և պայազատութիւն պահեցին. Տա-

բնի և Սասունի . յետինս թէ և ոչ բնիկ դաւառ է յիշեալ աշխարհիս , այլ Աղձնեաց , սակայն անմիջապէս կից Տարօնոյ , և մեր պատմութեան ժամանակ մէկ հայ իշխանութեան տակ էր . մեր Պահլավունի իշխանաց խնամքն քաջութեամբ տիրէին երկրին , երբեմն Յունաց կայսերաց խնամակալութեան տակ , և երբեմն ազատ : Այսպիսի էր Թոռնիկն որդի Մուշեղայ՝ զոր յիշեցինք (40) , որոյ որդին Չորտուանէլ Մամիկոնեան կ'իշխէր 'ի սկիզբն ԺԲ դարու , զոր արքայակերպ մեծացունէ՝ այն ատեն Մշոյ Առաքելոյ վանքը նստող Պօղոս Տարօնացի վարդապետն , Յունաց դէմ սաստիկ կրիւք գրուածոյն մէջ : Յիշուին ասոր որդին Վիգէն , և ասոր Թոռն Շահնշահ՝ փեսայն քեռկամ Թոռնէին Ենորհալոյ , որ կ'իշխէր նաև յետ Ենորհալոյ (1184) , երբեմն Շահի-Արմէնին քով արգելուած , յետոյ ազատած , և յետոյ դարձեալ զրկուած :

Ահա այսքան իշխանութիւնք կամ կոտորակք իշխանութեց Հայոց կային 'ի ժամանակս Ենորհալոյ 'ի Մեծ Հայս . յորս միութիւն չըլլալով , նաև անկարելի ըլլալով իրարմէ տեղեւազատուած և յայլազգեաց անջրպետուած ըլլալուն համար , ամբողջ ազգութիւն մը չէր երևեր . և իրաւամբ կոչէր Ենորհալին Բաղի-Սառնա-Բիւն և չքուածին Բաղի-Սառնա-Բիւն քաղաքի , ուր կարենային հայրապետական աթոռը դնել . և հիմայ ստիպեցան հանդէսընել զայն 'ի գլեկին Մովսէս :

Թ .

Եպիսկոպոսութիւն Ենորհալոյ . — Օգնականութիւն կարողիկոս կորսն . — Գրիգորիսի յորդորանօք կոյս մատնեագրութիւնք . — Իգնատիոս Վ . — Սարգիս Վ . — Ենորհալոյ Մկկն . Մատթէի :

Հաւանական երևի որ այս նոր բնակութեան և նոր Աթոռոյն մէջ Ներսէս ընդունեցաւ եպիսկոպոսական օծումը , իր եղբորը ձեռքէն , և անոր հրամանաւ քան խնդրանօք . վասն զի Ենորհալի իր սովորական պարկեշտութեամբ և խոնարհութեամբ կը զգուշանար ամեն պատուաւոր աստիճանէ . թէ և գրեթէ անկարելի էր ետ կենան , այնպիսի ձեռնադրիչ մ'ունենալով , որ թէ ուրիշ նկատմունք չունենար՝ նոյն իսկ կաթողիկոսական աթոռն ալ կ'ուզէր շուտով թողուլ իր հարազատ և աւելի շնորհազարդ եղբոր : Ամենուն յայտնի էր որ շուտ կամ ուշ Ներսէս պիտի եպիսկոպոսանայ , և հաւանօրէն նաև կաթողիկոսանայ . ուստի իր ամօթխածութիւնն և հնազանդութիւնն հաւասար եղան . առանց շատ ընդդիմութիւն ցուցնելու այն բանին՝ ուսկից պիտի չկարենար հրաժարել խոնարհեցաւ հայրապետ եղբորը աջոյն տակ , և մեծ հանգիսի մէջ ձեռնադրեցաւ եպիսկոպոս : Ոմանք համարին թէ 30 տարին անցած էր Ներսէս ձեռնադրութեան ատեն , այլ Գրիգորիսի սէրն և ջանքն , Ներսիսի արժանաւորութիւնն , և այն ատենուան սովորութիւնն՝ աւելի կարծեւ կու տան , թէ և քսան տարիէն ալ շատ չանցած , և գուցէ գեռ 'ի Մովսէս դիւանէն չեկած՝

եպիսկոպոսութիւնը ընդունած էր . վասն զի եթէ Ներսէս կը խորշէր և կը խղճէր իբրև արեւա-կըցութեւ պատճառ մը կարծեցնել այսպէս փութով եպիսկոպոսանալը , եղբայրն ալ ուշացնելը կը խղճէր՝ իբրև անստեղծ ըլլալու այնքան արժանեաց . կամ ինչպէս աւելի գեղեցիկ ուժով կ'ըսէ Լամբրոնացին ,

« Պատիժ անձինն իւր վարկանի
Թէ գըրուանաւ լոյսն ծածկի...
Աղերսանօք առ նա խօսի,
Ածել ըզնորհն՝ ի գործ բարի...
Իսկ խոհականն յամենայնի՝
Սիրով կամացն հնազանդի...
Ձեռնադրութեամբ հօր օծանի
Եպիսկոպոս մեծահարկի » :

Ենորհալին իբրև եպիսկոպոս առանձին թմիկ մ'ալ ունեցեր է , գէթ ատեն մը , (ըստ ոմանց Մամեստիա) , վասն զի Առնեաբանութեանը մէջ խոնարհաբար ինքզինքը մեղադրելով կ'ըսէ . « Եւ « ոչ 'ի Տէւր-Բէտն » առաւել հօգի արբուցի զնուրն « հանգստեան » , և այլն :

Ոչ քիչ անգամ մեր եկեղեցւոյ մէջ տեսուած էին կրկին եղբարք եպիսկոպոսունք , և երբեմն քահանայապետք , այլ գուցէ ոչ այսքան արժանաւոր անձինք , որով և աննմանք . մանաւանդ ոչ երբեք այսպիսի զուգակիցք , որք աւելի քան զ'40 տարի միաբան , իբր արդարև ամուլք տիրալուծք քրիստոսեան ազարակին մէջ՝ շիտակ և անխոնջ արօրագրելով , անբաւ բարեաց բերովք լըցին զհամբարս Հայաստանեայց եկեղեցւոյ և զերկինս իսկ : Պատմաց և մեր իսկ լուծը՝ դիւրաւ կըրնայ գուշակել խոհական ընթերցող կամ քննող մը , այսպիսի անզուգական զուգից այսքան երկար խաղաղական քահանայապետութեան վրայօք . որ համբաւով և արդեամբք մեր ազգին հայրապետութեան ամենէն պանծալի ժամանակներէն մէկն է , կըրնայ ըսուիլ թէ և յետինն : Այս պանծելի հարազատաց ձեռն 'ի ձեռն գործակցութիւնն՝ ոչ թէ լոկ մէկի տեղ երկու հոգւոյ առաւելութիւն մը տուած է , այլ իբրև մեծ միաբան բազմութե մը . որովհետև իրենց միաբանութիւնն կամ միութիւնն՝ ոչ լոկ արեամբ և տարիքով էր , այլ կըրնանք ըսել ամենայն կերպով . եռանդեամբ , մտաւոր կարողութեամբ և ախորժակօք , բնականէն վեր հոգեկան սիրով , և իբրև հայրենաւանդ կտակաւ կամ պարտքով մը՝ Հայոց եկեղեցին իր առջի պատուոյն և բարձրութեան մէջ պահելու : Մերձաւորաց և օտարաց վկայութիւնն , զարմանք և գովեստն և հաճութիւնն ալ՝ իրենց խրախոյս և նորոյժ կ'աւելցնէին , յետ աստուածապարգև շնորհաց և զօրութեան , որ հաճեցաւ տալ հարազատաց ձեռքով նոր այցելութիւն մ'ընել մեր եկեղեցւոյն : Իսոյց մենք խօսքերնիս կարելով թողունք Ս . Ներսիսի Լամբրոնացւոյ ներբողել ասոնց գործը , յետ յիշելու զեպիսկոպոսանալ Ենորհալոյն .

« Ահա վերին կամքն հաճեցան
Եւ Լուսաւորիչքս գոյացան .
Յեկեղեցի հաստատեցան ,
Մագաց ի ծագրս փայլեցան .

Երկու Ընտրեալքս որոշեցան,
Հոգւոյն կոչմամբ առաքեցան,
Բարձրաբարբառ քարոզ ելան
Չաւետարանն յազգքս տարան.
Որք յաշտանակ լոյս բարձրացան
Ի թորգոմեան տուն ծագեցան.
Հիւսիսայինն խաւարման
Փոյթ հալածող արեւ ցուցան:
Ի յառաջին աթոռ նրստան
Կաթողիկոսք երեւեցան.
Նախ յարեւմուտքս ճոխ ելան
Եւ յարեւելս պայծառ ցուցան:
Սոցա շնորհաց նշշոյլ փայլման
Չահաւորեալ տապով ջերման՝
Մեղաց ձրմեռն էառ վախճան,
Սառնամածեալ ախտքն սուգան.
Փարնանային ժամքն հասան,
Յամպոց քաղցրիկ ցօղ հոսեցան.
Պառքեալ հոգիքն ըզմայլեցան,
Հայոց ազինքս ծաղկեցան.
Աշխարհ ամեն խաղաղացան.
Քրիստոնէից ազգ զորացան,
Եկեղեցիք փակեալք՝ բացան.
Եւ վանորայք առատացան.
Վարդապետաց աթոռք եգան,
Ուսանելովն ոչ յագեցան.
Միայնութեան սիրողք եղան,
Աննիրհական վարս ըստացան:
Ի զանազան պըտուղս աճման
Յորգիտաւք հարքն տեսան.
Փրկչին անուանն ըզփառքս տան,
Ըզնոյն հայցեն մինչ ի վախճան»:

Կաթողիկոսի վերաբերեալ անմիջական գործերն՝ ի հարկէ Գրիգորիս գործէր. այլ գործոց մեծագոյն մասն Շնորհալույ ձեռքք կատարուէր. և սա մանաւանդ էր գործողն, նա հրամայող կամ վաւերացնող. վասն զի հաւանութիւն և կամք հաւասար էր երկոցուն: Ներսէս թէ և որոշակի փոխանորդ կամ աթոռակալ կոչուած չէ կաթողիկոսին, այլ իրօք առաւել էր քան զայն. ոչ միայն ներքին վարչութիւն և հոգք հայրապետաւնոցին, այլ և գրուածք և պատգամաւորութիւնք՝ Շնորհալույ ձեռքք և անձամբ կատարուէին: Միով բանիւ յամենայնի առաւել Ներսէս կ'երևէր և փայլէր, քան Գրիգորիս, բայց եթէ ի հանդիսական տեղիս և գործս: Այս բանիս գըլ խաւոր պատճառն յայտ է որ Ներսիսի շնորհաց և ձրից առաւելութիւնն էր. թէպէտ և Գրիգորիս իսկ շնորհազարդ, վսեմական, զգօն և հմուտ, այլ իր մեծ փառքն՝ մեծագոյն ևս փառք ունէր մօտը, ինչպէս պայծառ աստղ մը պայծառադոյն աստեղ մը քով. որուն ոչ միայն աննախանձաբար տեղի կու տար Գրիգորիս, այլ և պատուասիրաբար յառաջ անցնէր, մինչև ուր որ կրնար թող տալ կաթողիկոսական միաթոռութիւնն:

Անշուշտ մէջերնին բաժնած էին գործոց և գրուածոց մասերը. Գրիգորիս վերը յիշեալ կաթողիկոսի անմիջական գործերէն գուրս, առանձնական պարապմունքք ընտրած էր իր մեծ քեռւոյն Տօնամակը աւելի ճոխացնել, նորանոր վարուք և վկայութեամբ սրբոց, ևս առաւել Ներքողնիւք, այսինքն գովասանական ճառիւք Տնօրինական և

Տիրամօր տօնից, և սրբոց ոմանց. քանի մ'աշխարհապիւր յօրինած է. ասոր համար կոչուեցաւ Փայլապետ և Գրող Ներքողնից. որպիսի են Ս. Ա. տուածածնի ծննդեան և աննգեան գովասանական պատմութիւնն, և «Գրուած գովէասի Տնօ» «րինական տեղեաց Երուսաղէմի», և այլն: Ասոնցմէ զատ գեղեցիկ շարականն Աւետեաց՝ Խորհուրդն անձառ, նաև Բ. Թաղկազարդի ըստած կանոնն, (Մեծաբաշտ այս Խորհուրդ). իրեն կ'ընծայուին շնորհեաց գեղապետ տաղն ալ, «Ո՛վ զարմա, նալի խորհուրդս այս մեծ յայտնեալ», ըստ ոմանց և ի պատիւ Լուսաւորչի երգուածն «Ի յէլս ա. րեւու արեւ»: Առաջինն կրնայ մեր բանաստեղծական զպրութեան փոքր գրուածոց չքննող. գոյնէրէն սեպուիլ, և վսեմութեամբ ու պարզութեամբ ու զանազանութեամբ իմաստից յայնքան համառօտութեան՝ Շնորհալույ իսկ երեց երթօ մը արժանաւոր գրուիլ: Կան ձեռուքնիս քանի մը ջերմեռանդն և զգնական տղօթքներ ալ յանոն Գրիգորիսի կաթողիկոսի, բայց ստուգիւ ասոր ըլլալը չեմք գիտեր, և հաւանական են յետոց ըլլալ: Իայց այս քանի մը յիշեալ, միանգամայն և քանի մը տեսակ գրաւոր արտագրութիւնն. ընէն կ'իմացուի՝ որ Գրիգորիս ալ հանձնարեղ անձն էր, և ոչ միայն աթոռով այլ և գրչով կրնար իր քեռւոյն և եղբօր հետ դասակարգիլ, և քան զառաւելի բարձր և ինչպիսի թուիլ բանաստեղծական թեւերով: Այլ չեմ գիտեր իր անձնական գրուած, ներմիջ աւելի արդիւնաւոր է մեր զպրութեան մէջ, թէ ուրիշներու ալ գրել տալովք. որոց մէջ եթէ առաջին է իր հարազատն Ներսէս, իրենց հին ուսումնակիցքն՝ Իգնատիոս և Սարգիս ալ արժանաւորք են իրենց դասակարգութե և յիշման:

Ասոնց մէջ կարգաւ և պատուով առաջին է Իգնատիոս վարդապետ, որ և եպիսկոպոս եղած է, հաւանորէն սոյն Գրիգորիսի ձեռնագրութիւնք, որ և յանձնէր էր իրեն Դուկասու աւետարանին մեկնութիւնը գրել. իսկ նա կը զանգաղէր, կամ գործոյն գծուարութեան, կամ որ և է պատճառաւ. մինչև, ըստ աւանգութեան, տեսլամբ քնոյ տեսաւ գեղեցիկ և լուսաւոր առձար մը, ուր կը մանէին իր ընկերակիցքն, և իրեն թոյլ չէր տրուէր մանելու, որովհետեւ չէր աշխատած՝ անոնց պէս հոգեոր գրչութեան, և կաթողիկոսին յանձնածը չէր կատարած: Ասկէց յորդորուելով, կ'ըսեն, ձեռք զարկաւ և գրեց Դուկասու աւետարանին մեկնութիւնք. համառօտ խօսքերով, այլ իմաստը բովանդակելով, առանց երկար քննաբանութեց և յիշատակութեան հին հարց գրուածոց, միանգամայն և յստակ հայկաբանութե և հանձնարեղ զարձուածքներով. որով մեր զպրութեան ամենէն ճորտար և յստակաբան գրչաց և համառօտաց մէկն կամ պլնաւորն է: Գրութեան տարին չէ նշանակած յիշատակարանաւ, կամ ընծալ յականաւն առ Գրիգ. Կաթողիկոս, այլ յայտ է որ ԺԲ դարուն կիսէն յառաջ գրած է, թերեւ քան զոմանս ուշ սկսելով՝ այլ աւելի շուտ աւարտելով. վասն զի յամին 1146 Կոնդ Սարգիս ա. նուամբ արեւելցի վարդապետ մ'ալ, աշակերտ մեծիմաստ Սարկաւազ վարդապետի, Դուկասու աւետարանի համառօտ մեկնութիւն մը գրելով կը հաւաքէ ի զանազան Հարց և վարդապետաց գրածներէն, որոց մէկն ալ կոչէ Տէր Իգնատիոս:

Իսկ Սարգիս վարդապետ՝ դասընկերն Իգնատիոսի, որ Սեաւ Լէրանց Փարաշիթու ըստւած վանքը կը բնակէր, գրած է եօթն Կաթողիկէայ թղթոց մեկնութիւնը, երկար քննութեամբ և ալ երկար խրատական յորդորակցք, ջանալով Ոսկիբերանի ոճայն հետեւել բոլորովին տարբեր ճամբայ մը բռնելով իր դասակցէն. որքան նա համառօտ կ'անցնի, այնքան սա երկար և ուշ-բայց շարագրութիւնն նոյնպէս յստակ, և աւելի պարզ ու վայելուչ ըլլալով, զրուցուածքն ալ կակուղ և սրտաբուրդ, անխորժ չըլլար կարգալու: Այս ընդարձակ գործն հաւաստեալ քանի մը տարուան մէջ գրուած է. տեղ մը կը յիշէ հեղինակն որ Քրիստոսի հաղար թուականէն մինչև այն գրելու առեւն՝ 1156 տարի անցեր էր, և աւտով կ'իմացնէ իր մատենագրութեան ժամանակն ալ: Յետ որոյ տեսնելով ինքն հեղինակն որ գրուածքին երկարութիւնն կը դժարացնէ օրինակները շատցնել և շատոց ընթերցանելի ընել, քանի մը տարի վերջը, համառօտեց իր գիրքը, և նոր գործ մը հրատարակեց. սակայն առաջինն և ընդարձակն աւելի ընդունելի եղաւ յետոց, և տպագրեցաւ ալ ի Կոստանդնուպոլս, քիչ մը համարձակ ձեռք: Այս գրուածիս առեւն՝ կը յիշեցնէ Սարգիս իր ծերութիւնը, « Աղաչելով « վասն իմ ծերոյս Սարգսի՝ զՏէր »: Թուականն ալ կը նշանակէ, այսպէս. « Հայ թուականն յայնմ « ամի՝ յորժամ կատարեցի զհամառօտս, յիշաւ « տակ ինձ և իմոցն, և ի վարժումն մանկանց նո « րոյ առաջատի մօրս մերոյ՝ վերինն Երուսա « ղէմի, Ժե էր ընդ վեցհարիւրի. ի փառս Քրիս « տոսի »: որ է Ն. Ենորհալոյ կաթողիկոսանա լու տարին, 1166:

Սա ինքն հայրապետ Ներսէս ալ հաւաքած է Կաթողիկէայ թղթոց համառօտ մեկնութիւն մը՝ ի բանից Ս. Հարց, որոյ հին օրինակ մը գտուի մեր ձեռքը, գրուած իր մահուընէն 26 տարի ետև, յամի 1198. յորում հեղինակին անուէն յիշատակարանին մէջ քերուած է, այլ ուրիշ օրինակ յայտնապէս կը վկայէ թէ հեղինակն էր « Հայրապետական արժանացեալ շնորհի և վար « զապետական վիճակեալ աստիճանի, Տէր Ներ « սէս, մականուամբ Կլայեցի, հմտասիրացն հե « աւելով պարուց », և այլն. և այս կըրնայ լու « ծանել զտարակոյս ոմանց՝ որ ի իրեն չեն համարիր այս գրուածը. զոր մանաւանդ պէտք էր հաստա « տել մեր օրինակին մէջ անմիջապէս թղթոց մեկ « նութենէն վերջը՝ Ենորհալոյ գրած կամ սրբոց գրած Ս. Սարգսի վկայաբանութիւնն, և գրոց նախագաղափարն՝ Ենորհալոյ եղբորորդոյ Քրի « զոր Ապիրատ կաթողիկոսին ըլլալն: Այս մեկնու « թիւնս Սարգսի գրածին պէս միատարր մեկնու « թիւն չէ, այլ Ս. Հարց խօսքերն հատուած հա « տուած շարած և իրարու ագուցած, անուննին ալ նշանակելով:

Հարկ համարեցանք նշանակել այս բաներս, մեր Ենորհալոյ որ և է թէ աներկբայ թէ երկբայական երկասիրութիւնները անծանօթ չթող լու համար. միանգամայն յիշելու և այն ատեն Քրիզոստոմոս կաթողիկոսի ունեցած փափագը՝ Ս. Քրոց գիւրահաս մեկնութիւններ հրատարակե.

լու. որոց կարող և յարմար գիտէր իր այսպիսի հին ուսումնականիցները: Անհնար էր որ ասոնց մէջ ալ չգտուի իր բազմահանձար հարազատն. և ահա՝ եթէ ոչ Կաթողիկէայ թղթերը հեղինակօրէն մեկնեց, նոր Կտակարանաց առաջին գիրքը սկսաւ մեկնաբանել. և երեւի թէ կանուխ ալ սկսաւ այս գործը. եթէ յառաջաբանին մէջ յիշած խոնարհ երախտապարտութիւնն առ իր կա « թողիկոս եղբայրն՝ համարինք իբրև նոր յիշատակ մ'իր դաստիարակութեանը, և ոչ հնացեալ՝ իր խոնարհ սրտին մէջ, որ ինչուան ետքն ալ իբրև օտար և նուաստ եկեղեցական մը՝ կը պատուէր զՔրիզոստոմոս իբրև հայրապետ Հայաստանեայց եկեղեցւոյ, և կը սիրէր իբրև հարազատ. և երկուքն ալ կը յայտնէ իր Յաւաքաբանին: « Սիրոյ « զօրութիւն՝ գերազանց է քան զմեկնութիւն... և « եթէ առ ոմանս՝ իցէ պանծալի ըստ մարմնաւոր « իրիք պատճառաց, որպիսի՞ իցէ բոլորիցն կրո « ղաց, ըստ իմումս պատահեալ անձին՝ առ ի « քէն գթութեանց. ոչ յաղագս բնաւորականին « միայն կապակցութեան արեան, որ հանուրց « է առիթ և փոքրոգեաց, այլ սակս գերա « զանցելոյ բանի և գրոյ՝ ներդրածեցելոյ առ իս « բարեաց... Զեռնարկեալ յայս առաջարկու « թիւն՝ ըստ պատուասիրաբար քում հրամանի, « զլուս պատուական, յետ գլխոյն եկեղեցւոյ, « Քրիզոստոմոս կաթողիկոս Հայոց », և այլն: Գր « րուածին կերպին համար ալ կ'իմացնէ, որ իր կամքն էր « հաւաքել զտարածեալ բանս սրբ « բոցն, և գնել հանդէպ իւրաքանչիւրումն աւել « տարանականաց բանիցս... է ինչ զի զնոյն ե « դաք նկարագրութիւն ի մեկնողացն բանից, և « է զի զառ ի նոցայն միտս՝ մերովս բանիւ, յոր « ժամ ընդարձակագոյն ճառիցին բանք. և թէ « յայլ և յայլ տեղիս ցնդեալք՝ ի մի իմն բերեալ « ընտանեգոյն բանին զուգեղով. փոքր ինչ և ի « մէջ յաւելեալ՝ անփոյթ եղելումն ի նոցունց « բանի. է զորս յայլոց այլոց ի գիրս գտեալ, և « է զորս ի մերոց ներածութեանց. որպէս զի ա « մենեքումք փառաւորեսցի անկարօտն փառաց « Ստուռած »: Այսպիսի անոյշ խօսքերով է և մեկնութիւնն. որուն սկիզբը արժան համարած է հին աւետարանաց համաբարբառ ըսուած ցանկե « րուն վերև պէսպէս նկարներուն, խորանաձև կամարներուն, կենդանեաց, զարդուց և այլն, խոր « հրդաւոր միտքեր տալ կամ տրուածը բացատրել: Իսկ մեկնութիւնն Սարգսի գրուածին պէս միա « ձոյլ է, առանց յիշելու և վկայութիւն կանչելու զՍ. Հարս, թէ և շատ հեղ անոնց բերնով կը խօսի. ինչպէս ինքնին իմացուց յառաջաբանին մէջ. և յայտնի է որ պէտք էր ամենէն աւելի Ս. Յովհան Ոսկիբերանին իմաստներն առնուել, որ այնպէս ընդարձակ և պայծառ բացայայտած էր զՍ. Ա. « ւետարանիչը, և զոր նախնիք մեր՝ գրողն յար « մար ոսկեղէն հայկաբանութեամբ մը թարգմա « նած են. իսկ մեր Ենորհալին այն ոսկի բերանին բղնածն իր արծաթափայլ բանիւ և գրելով յե « րիւրած յարմարած է հասարակոց մտաց գիւ « րահաս, և միջակ չափով. իբրև անարուեստ ա « րուեստով մը, որ սքանչելի պարզութեան հետ՝ մտաց յագուրդ կու տայ և սրտի հանգիստ: Այս գործն Ենորհալոյ գլխաւոր գործոց մէկն է, և ալ աւելի պիտի ըլլար, եթէ այնու ոճով շարու.

նակուած մինչև 'ի վերջ աւետարանին' մեզի հասած ըլլար. սակայն իր գրածն և մեկնածն մինչև յ'17 համար Յ զիւոյ Մատթէոսի հասած և հոն դադրած է. և այսպէս գտաւ 100 տարի վերջը՝ Կիրակոս պատմիչ, որ « ոչ գիտեմ, կ'ըսէ, թէ « վասն ինչ պատճառի խափան եղև », շարունակութիւն մեկնութեան. 50 տարի ալ ետև, (յա. մին 1316) մեծ բանասէրն Յովհաննէս Երզնկայեցի, շատ քննեց՝ բայց չկարցաւ ստուգել թէ ինչու անկատար մնացեր էր Ենորհալոյ երկասիրութիւնն. և թէպէտ « ոմանք զմահն ասացին « խափանումն, և այլք զհոգ հայրապետական « աթոռոյն, և կէսք թէ գրեաց՝ և չէ 'ի միջի', « բայց սոքա ինչ ոչ եղեն հաւանելի », կ'ըսէ. և իր առանձին կարծիքը չի յայտնէր. բայց միայն կ'իմացնէ, որ իրմէ առաջ ոմանք ձեռք զարկեր էին շարունակելու Ենորհալոյ սկսածը, « սա. « կայն ոչ էր կարգաւոր որպէս Սրբոյն, այլ հա. « տակոտոր արարեալ զբանս առաջին մեկնաց, « նաև զբնաբանութիւն աւետարանին արտաքս « մերժեալ, ուստի ոչ գայր դիւրաւ յիմացումն « ընթերցողացն », և այլն: Այս ակնարկեալ մեկ. նիշներէն մեզի յայտնի եղածն է Արիստակէս վարդապետ մը և իր աշակերտն Յփրեմ, որք Երզնկայեցոյն ըսածին պէս՝ շարունակած են մեկնութիւնը՝ Ոսկրեարանի հետեւելով միայն, կամ համառոտելով զայն: Իսկ ինքն Թագէի վանքը նուաժ ատեն՝ ուսումնասիրաց աղաչանք յորդորուած՝ ջանալով ըստ կարի Ենորհալոյ ոճը բռնել, անոր դադրած տեղէն (յ'18 համարոյ Յ Կըլ խոյն) յառաջ տարած և աւարտած է բոլոր Մատթէի աւետարանին մեկնութիւնը, 'ի նոյն ինքն Ենորհալիէն շնորհք և լոյս առնելով, ինչպէս կըրնանք իմանալ ըսածը, թէ մեկնութիւնն առած է մասամբ « յառաջին սրբոցն. և է զի 'ի ծագմանէ « նշուլից շնորհաց վերասացեալ առնն Աստու. « ծոյ՝ 'ի միտս մեր... խառնելով զնսեմատեսակ « անկից տգեղութիւն՝ ընդ չքնաղագիւտ և լու. « սատեսակ իմաստիցն պայծառութիւն. գիտե. « լով էթէ Պողոսի շնորհէ վարձս՝ ըստ տնկելոյն, « և Ապողոսի՝ ըստ ուղղութեան. վասն որոյ աղա. « չեմ... վատահոլութեան մերում ներողս լինել », և այլն: — Արգարեա Երզնկայեցոյ յուսոյ և փափագանաց յարմար՝ իր վրայ Ենորհալի շնորհաց նշոյլքն ծագեալ կ'երևին. որով կըրցեր է մտնել « յընդարձակութիւն անգնդական խորոց լայնու. « թեան, 'ի խորութիւն ծովուս անցանել և յեզր « աւետարանական բանիցս հասանել », գեղեցիկ վատահոլութեամբ և յաջողութեամբ. և մեծ շնորհակալեաց արժանի է: Սակայն եթէ մեր ծարաւը կը լեցնէ, ոչ երբեք կը յագի փափաքն և ցաւն՝ բուն իսկ Ենորհալոյն ամբողջ գրութիւնը չունենալովուս, իր սքանչելի ոճով և հնարքովը. այն աստուածաշունչ կերպովը՝ զոր 'ի սկզբանն յիշեցինք, իբրև տեսլախառն զմայլմամբ և յափշտակութեամբ, որով կրկնակի կը նմանէր Ոսկրեարանի: Իսկ իր աշխատանացը՝ (գծուարին կամ հակառակեալ բանից Ս. Աւետարանին՝ մեկնութիւնը

գանելու) վկայ ունիմք յիշատակ մը, որ կը ծա. նուցանէ մեզ, թէ զինգիրն Ս. Յովսէփայ հօրն անուանը, (զոր Մատթէոս Յակոբ կոչէ, Ղուկաս՝ Հեղի) լուծելու համար, հարցուցեր էր նաև Ապուսայիտ Ասորի բժշկին և հնազանդին, և անոր եկեղեցւոյն աւանդութեամբ ստուգեր, որ Հեղեայ անորդի մեռնելովը՝ Յակոբ առեր էր անոր կինը, ըստ օրինաց Հրէից, և անկէ ունեցած զաւակն Յովսէփի՝ իր որդին էր բնութեամբ, այլ օրինք՝ որդի Հեղեայ. ինչպէս որ նոյն իսկ Հեղի և Յակոբ ալ եղբարք էին համամարք, այլ տարբեր հայրերէ, մէկն 'ի Մատթանայ (զոր Մատթէոս յիշէ) միւսն 'ի Մելքեայ (զոր Ղուկաս յիշէ): Այսպէս ալ կը գրէ Ենորհալին, ըստ սովորութեանն լուծելով իր մեկնութեան աղբիւրները. վասն զի ոչ եթէ իր հմտութիւնը կ'ուզէր յայտնել, այլ ընթերցողը հմտացնել. ասոր համար չէր խորշը և չէր զանց առնէր հետամուտ ըլլալու հաւաստագոյն աղբիւրներու, որ և է ինքորոց և գիտեւեաց համար: Եւ ահա նոյն յիշեալ Ասորի հեղինակին հարցուց և քննեց իր բնական աշխարհին մէջ եղած անուանի Երգեսոյի քաղաքին սկզբնաւորութիւնը, որոյ վրայօք իր հուշակեալ Ողբը պիտի գրէր, ինչպէս տեսնենք յետոյ: Իսկ հիմայ բաւական ըլլայ ըսածնիս ի ցոյց գովելի և վատահոլ երկասիրութեան մեր Ենորհալոյն և իր անխոնջ աշխատանացը՝ 'ի դիւտ չճմարտին, յատկութիւն մը՝ որ իր ամեն յատկութեանց ալ կրկին արժէք կու տայ:

Ժ.

Գիտնական անձիք և տեղիք Ժամանակիս 'ի Մեծ Հայս. — Անի և Սամուէլ, Միսիրար, Վարդան Անեցի, ասոր Երզնկիկն. — Գանձակ և գիտնական վարդապետքն. — Միսիրար գոյ. — Հայրատ և Սանահին. — Յակոբ Բարսախնցի. — Յ. Սարկաւագ Սոփիստէս:

Անշուշտ Գրիգորիս նոր վկայաբերն և իմաստասէր ոչ միայն իր մերձաւոր վարդապետաց և գիտնոց գրելու և աշխատելու յորդորիչ և Մեկենաս եղաւ, այլ և հեռաւորաց, ըստ իւրաքանչիւր յաջողութեանց. որոց մէջ համարուի Ժա. մանակագիրն Սահալ երեց Անեցի. յերիտասարդութեանն՝ գերահռչակ Սարկաւագ վարդապետի աշակերտած, անոր բազմապատիկ հմտութեանց հաղորդ և սիրող. մանաւանդ պատմական և Ժա. մանակագրական գիտելեաց: Սովորաբար կարծուի թէ Գրիգորիս յանձնեց ասոր՝ ստոյգ քննելու թէ ազգային և գրացի պատմութեան Ժամանակագրութիւն մը յօրինել: Մինչև այն ատեն շատ Հայ պատմիչք եղած էին, և շատին գրածն ալ զրտուեր, սակայն դեռ ոչ ոք այնպիսի ոճով գրած էր, որ Եւսեբիոսի Քրոնիկոնին՝ այսինքն Ժամանակագիր պատմութեան նման ըլլայ, ստուգելով դիպաց և թագաւորաց ու քահանայապետաց թուականները, և աղիւսակներով ալ զանոնք շարելով և իրարու հետ համեմատելով: Մեր բազմերախտ պատմահայրն Մովսէս Խորենացի՝ առա.

1 Բառապարհէն յայտնի եղաւ որ եղբորը կաթողիկոսութեան ատեն սկսած էր գրել այս մեկնութիւնը. բայց Լամբրոնացին՝ առանց Մատթէոսի անունը տալու՝ աւետարանի մեկնութիւն գրել Ենորհալի կաթողիկոսութեան ատեն կը ցուցնէ:

Ջին հեռեւոյ Եւսեբեայ, անշուշտ այսպիսի բան մ'ըրած էր իր պատմագրութեան ետեւը, ինչպէս որ կարծիք ունէր մը կ'իմացնէ, սակայն մեզի համար չէ ստոյգ բան մը. և ոչ իսկ Սամուէլը յիշէ զայս, այլ ժայն թէ իրեն առաջնորդ կ'առնու զասոնք, (« ձեռնտու ունեւոր զնոսա, զԵւսե. » բի սսեմ և զՄովսէս Խորենացի »): Անոնցմէ ետեւ Սամուէլը ուրիշ ազգային և թարգմանեալ պատմիչներու հետեւելով, և իր վարպետաց Սարկաւազայ և Գեորգայ ծանօթութեանց, ի նախապետաց կը սկսի ժամանակագիր պատմութիւնն ընդհանուր հին ազգաց՝ մինչև ի Գրիստոս, ըստ կարելւոյն թուականներն ալ զնելով. իսկ ի Գրիստոսէ կը սկսի ասոր թուականն ալ շարեւ դաւազաններով կամ աղիւսականներով անընդհատ տարի առ տարի, Հայոց, Հռովմայեցւոց կամ Կայսերաց, Պարսից և յետոյ Արաբացւոց իշխողաց յաջորդութիւնները, և ըստ ժամանակին Հայոց կաթողիկոսաց շարքը, իւրաքանչիւրին իշխանութիւն և աթոռակալութիւն տարեթիւն ալ նշանակելով հետզհետէ. իսկ նշանաւոր գիպուածները՝ աղիւսականց լուսանցքները գրելով, և երբեմն այս աղիւսականները կամ գաւազանները գաղտնիքներով, ու կարեւոր անգեղութիւնները գրելով, յետոյ դարձեալ շարունակելով զգաւազանս. և այսու ոճով կը հասցնէ մինչև Ենորհալուոյն վախճանը և անկէ քիչ անգին, ցամաք 1177. ուսկից անգին ուրիշ շարունակող հեղինակ մը կ'ըսէ, (« Աստանօր զտեղի « առեալ կացին շարագրութիւնք գեղեցկաբանին « Սամուէլի, զոր բազում երկասիրութեամբ հոգ « տարեալ ստուգագրութեան՝ և ճշգրտիւ հա « սուցեալ մինչև յիւրն ժամանակ »): Իսկ ինքն Սամուէլը յաւաքաբանութեանը մէջ կ'ըսէ. « Մո « ռացեալ զագիտութիւն և զանուսումնութիւն « իմ, ի թախանձելոյ քոյ, Սրբազգեացդ Գրի « զոր, յաղթեցայ ի կամաց ձերոց՝ առ ի գրել « զոր կամեցար... »: Նոյնպէս և յառաջ քան զսկիզբն գաւազանագրութեան. « Արդ ո՞վ սրբ. « բազգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թա « խանձելոյ ձերոյ զեղեկիւն անձն իմ, ետու զան « արհեստ ձեռն իմ ի մշակութիւն այսմ գոր. « ծոյ, մոռանալով զբաղաւորն կենցաղակա « նիս...: Սկսեալ ի ծննդէնէն Գրիստոսի՝ յառա « ջին ամի, զոր կարգեցից բուն թուական, և « զթագաւորս Հռովմայեցւոց, Հրէից և Պարսից և « զմերոյս աղգի, ստոյգ գտակաւ գրեցից անյա « պաղ »: Մեր ձեռքը հասած օրինակաց մէջ Սա « մուէլի վերջաբանութիւնն կամ յիշատակարանն չկայ. գուցէ դուրս թողած ըլլան իր շարունա « կողքն, որք և իրարու յաջորդելով այս Հայկա « կան Քրոնիկոնը կամ ժամանակագրութիւնը հա « սուցած են մինչև յ'ԺԸ դար. և ինչպէս Սամուէլը զԵւսեբիոս օրինակ առեր է, զինքն ալ օրինակ և առաջնորդ կ'առնուն մերազգիք: Սամուէլը ժա « մանակագրութեանն զատ սօմարական բաներ ալ գրած է, որոց լու հմտացեր էր իր ամենահմուտ վարպետէն (Սարկաւազայ). այսպիսի է պարզ ոճով ու հարցմամբ և պատասխանով գրուած մը իր անուամբ, ի խնդրոյ Խմաստասէր մականուա « նեալ Ստեփանոս վարդապետի մը:

Թէ և սովորաբար ըսինք կարծուի որ Սամուէլը Գրիգորիսի յորդորմամբ գրած ըլլայ ժամանակագրութիւնը, այլ ինձ թուի թէ ոչ անոր՝ այլ

Գր. Տղայոյ խնդրով գրած է, որոյ ժամանակն ալ կը դադրեցնէ պատմութիւնը. վերոյգրեալ յիշատակարանացը մէջ տեսանք որ զկաթողիկոսը Գրիգոր կ'անուանէ, պատմութեանցը մէջ ալ այսպէս անուանէ միշտ զՏղայն, իսկ զեղբայրն Ներսիսի՝ Գրիգորիս: Բայց մենք ոչ զայս նկատելով հօս յիշեցինք այս հեղինակը, այլ զի ուղե « ցինք ժամանակիս գրաւոր վիճակն ալ քիչ մը ծանուցանել, թէ մեր պատմական պարագայն աւելի ամբողջ բոլորելու համար, և թէ անոր կէ « գրոնը բռնող Ենորհալին աւելի պայծառ և գե « րազանց ցուցնելու:

Արդ թէպէտ և Ենորհալոյ դաստիարակու « թիւնը յիշելու ատեն՝ իրմէ ալ լսեցինք (61) որ Հայոց մէջ յունական հոգեակեալ վարժարանք չկային, և ոչ դպրութիւն օտար լեզուաց, այլ ճանչցանք ալ որ իր ԺԲ դարն մեր պարականու « թեան ամենէն ճոխ և պայծառ դարն է, յետ ա « լուրց թարգմանչաց: Այս ուսմանց նորոգութե « սկիզբն՝ դար մ'և աւելի առաջ սկզբնաւորեր էր՝ Բագրատունի թագաւորաց հարստութեամբ և այլ և այլ իշխանաց բարեպաշտութեամբ, երբ սկսան վաճառել նորոգել և նորանոր կանգնել, մանաւանդ Նիրակայ և մօտիկ գաւառաց և Ձո « րագետոյ մէջ: Հարկ էր որ անոնց կենդրոն ըլլար մայրաքաղաքն Անի, ուր արքունեաց հետ հաս « տատեցաւ և հայրապետանոցն Հայոց, և իր մերձա « գոյն սահմանքն. յորոնախ հաստատեցան կրօնիւք և ուսմամբ հոգեակեալ վանորայքն Հոռոմոսի, Հառիճոյ, Մարմաշէն, Կարմիջաձոր, և յատուկ իսկ ուսմանց անուամբ կոչեալն Դպրեվանք, և Արգինայի կաթողիկոսարանն, ուր թաշիկ Ա (971-991) « զաստուածախօս կտակա յորովակի « ստացեալ՝ զգիրս սուրբս, զառաքելասացս և « զմարգարէաբարոզ պատգամս՝ հանգերձ ամե « նայն վարդապետացն ձայնիւք », ըստ Ասող « կայ¹: Դժբաղդաբար Անի երբ շինութեան և բարգաւաճանաց ծայրն հասաւ, երբ շատցան իր « վարդապետքն ճմարտախօսք՝ հանգոյն առաջին « վարդապետացն՝ ի խորս գիտութե հասեալ² ». և երբ իր շրջակայ « անապատագոյն վայրքն լցեալ « և խճողեալ էին կրօնաւորական դասուք, մինչ « զի զգեօղս և զագարակս՝ առ բարի նախանձ « քահնալ՝ առնէին բնակութիւն կրօնաւորաց³ », նման թարգմանչաց դարուն հանգիպածին՝ սա ալ շուտով կորոյս թագաւորական և հայրապետա « կան գահերը. անով նուազեցան և իր երկու ձեռն « տուքն մտաւոր բարգաւաճանաց. զոր ալ աւելի զրկեցին անդադար և մի ըստ միով յափշտակու « թիւնք Անոյ՝ ի Յունաց, Թուրքաց, Վրաց և Պարսից: Ի վերայ այսր ամենայնի գեռ մեր պատմա « կան պարագային միջոց և ցվեր ժԲ դարուն՝ Անի Հայոց մայրաքաղաք կը համարէր և բնավայր կա « թողիկոսաց, որք և յոյս ունէին վերագառնալու հօն. որոյ և եպիսկոպոսն իբրեւ իրենց աթոռակալ էր, սկսեալ Մեծ Վկայասիրէն գրուած Բարսէ « և հարիւր տարի ետեւ ալ Հռովմայի Ժողովոյն մէջ (1177) յետ երկուց կաթողիկոսացն՝ Հայոց և Ա « զուանից՝ ամենուն նախաթոռ բաղմեցաւ Անոյ

1 Գրք Գ. գլ. Թ. :
2 Ար. Լաստիվ. ԺԷ. :
3 Նոյն, Ժ. :

արքեպիսկոպոսն Բարսեղ ըսեւ է որ այսպիսի եկեղեցական աթոռ, և քաղաքական ալ մեծ տեղական կամ առանձնակ իշխող ամիրայից և փոխարքայից գահ եղող քաղաքն՝ չէր կրնար չունենալ և ուսումնական պայծառութիւն մը։ Թէ և մեզի անկէ շատ ճառագայթներ հասած չըլլան՝ զլացու թեամբ ժամանակի, այլ և ոչ իսպառ աննշող մնացած։ Եւ ահա վերոյիշեալն Սամուէլ, որ աշխարհիկ երէց մ'էր, ըլլայ մէկ օրինակ մը։ որոյ յիշուին և երեք համաքաղաքացի համշիրակբ, աշակերտք հոգակեալն Սարկաւագայ, Խալափար, Գրիգոր և Յովնան, իբրև նշանաւորք գիտութիւն և գրչութեամբ, թէ և դեռ մեզի ծանօթ չեն իրենց գրաւոր վաստակքն։

Իսկ ինքն Սամուէլ յիշէ վերը նշանակուած Գէորգ վարդապետ մը՝ որուն աշակերտ աւելած էր, ինչպէս և Սարկաւագայ։ և կ'ըսէ թէ այս Գէորգս իրեն պէս ժամանակագրական գաւազան մը գրած էր առջի դարերուն, ինչուան Հայոց թուականը, 'ի կէս Զ դարու, և այս գործս եղաւ առաջնորդ Սամուէլի։ Գէորգայ բուն գործն չըկայ հիմայ։ այլ շատ հաւանօրէն այս վարդապետն է Գէորգ Անշի կոչուած Գանձասացն, որոյ աշուտմբ քսանէն աւելի գանձք կան, չափաւոր շնորհքով, որոց անագլուխ տառքն Գէորգ կը կապեն, և մէկուն վրայ Անեցի կոչումն ալ գրած է։

Սամուէլի կրտսեր ժամանակակից և հայրենա. կից է Միքիմար Անշի, մայրաքաղաքին կաթողիկէին Երէցը։ որոյ հմուտութեանը և հետաքննութեանը գովութեամբ կը վկայեն Վարդան և ուրիշ պատմիչք, իրմէ լոյս առնելով. վասն զի Միքիմար աղքային Պատմութիւն մը գրած էր շատ քննութիւն և բաղդատութեամբ։ նպատակ ունենալով Բագրատունեաց ցեղին պայազատաց և թագաւորաց ու անոնց մայրաքաղաքին Անոյ և սահմանաց զի պուածները։ երեք մաս բաժնած էր գործը. առաջինն՝ Բագրատունեաց հին յիշատակները՝ Հայկազանց Պարոյր առաջին թագաւորէն սկսելով մինչև վերջինն Յովհաննէս-Սմբատ Բագրատունի թագաւորը կը հասցընէր։ Բն 'ի Յովհաննիսէ' մինչև 'ի Բարսեղ կաթողիկոս, Գն անկէ մինչև յառումն Երուսաղէմի 'ի Սալահէտաինայ (1186) և քիչ մ'ալ վերջը՝ մինչև ցամա 1193, որ է ըսել 'ի մահ Գրիգորի Տղայոյ։ Յայտ է որ Բ և Գ մասն՝ զոր ինքն Պրակ կ'անուանէ՝ շատ հետաքննական պիտի ըլլան, որոց մէջ « գրեթէ զ140 ամաց մեծամեծ « գործս », կ'ըսէ պատմել և գրել խնդրեր էր իր մէջ Հառիճոյ Վանաց¹ Հայր՝ Գրիգորն, ինքն ալ յանձն առեր էր գրել և « լայն և տարած բա. « նիւք ընդարձակել »։ Դժբաղդաբար այս պիտանի Պրակներն մեր ձեռքը հասած չեն։ որոց մէջ Թուրք տիրապետաց և Աթաբէկաց վրայ կարևոր տեղեկութիւնք կային, արևելեայ օտար պատմիչաց գրուածներէն առած. որ և յայտնէ իր լեզուագիտութիւնը։

Այս բանին վկայութիւն է և պարսկերէն լեզուէ աստղաբաշխական գիրք մը թարգմանելն, արեգական և լուսնի թաւարմանց վրայօք, շատ աղիւսասկօք, որ պարսկերէն Զիճ կ'ըսուին, և

աստղաբաշխական գրուածք նշանակեն։ Թերևս զնոյն պէտք է իմանալ Վարդան Պատմիչի Ոճիկ կոչածը, զոր ինքն իբրև Պարսիկ հեղինակի անուն յիշէ. այս գործոյս մէջ (որ Պատմութեանը պէս՝ մեզի հասած չէ, կամ ծանօթ չէ) յիշէր Միքիմար 1176ին հանդիպած արեգական բոլորական Ֆէ Խաւարաւը. զոր գիտելով և Ներսէս Լամբրոնացի՝ կամ իր հայրենի սարաքարձր գիտանոցէն, կամ 'ի Հոռմկլայի՝ քարանձաւաց գագաթէն, ափշեր և սոսկայր։ « յաւուր նոր կիւրակէին, կ'ըսէ, (11 « ապրիլի), յառաւօտուն պահու ընդ ծագել ա. « ընուն՝ եղև խաւար 'ի վերայ երկրի. ոչ որպէս « խաւարումն արեգական, այլ որպէս զհասարակ « գիշերի, յորժամ իցէ առանց լուսնի և աստե. « ղաց, 'ի յաշխարհէ Պաղեստինացւոց մինչև 'ի Բիւզանդիոն, և յայլ բազում գաւառս...։ Այլ « եթէ զկորուստ քրիստոնէիցն դուշակեաց (Մա. « նուէլի կայսեր և զօրացն 'ի Խլիճ Արլանայ՝ յամ « սեան սեպտեմբերի) ոչ գիտեմ, և եթէ զտղայն « սաստկութիւն՝ որ 'ի նոյն ամի եղև՝ և ոչ զայն « ևս (գիտեմ) »։ Եթէ քանի մը տարի առաջ թարգմանած և հրատարակած ըլլար Միքիմար Անեցի իր գործը՝ Լամբրոնացին կրնար ստուգել, այդ խաւարման բնական պատճառը, որ « քննեալ եղև, կ'ըսէ, յիմաստասիրաց բազմաց, « գտաւ զիր տստեղաց և ընթացք արեգական և « լուսնի յիւրեանց կայանս, առանց իրիջ սայ. « թաքման. և մնաց այնու տշխարհս ժամ մի, և « ապա եղև լոյս »։ Յայտ է որ այն իմաստասէրքն՝ բաւական հմուտ չըլլալով աւելի սայթաքեր են քան իրենց գիտածը։ Մեզի նշանելի բան մ'ալ այս է՝ որ մի է նոյն ժամանակ երկու Միքիմարք, մէկն Անեցի միւսն Հերացի, աստղաբաշխական գիտութեանց պարագայեր և հմտացեր են. ետ. քինս՝ որ մտերմացեր էր ընդ Շնորհաւոյ, որպէս և ընդ յաջորդի նորա, պիտի յիշուի յետոյ։

Հիմայ խօսքերնիս Անեցոց վրայ է, որոց համար աւանդութեամբ կ'ըսեն և յետին դարուց գրիչք, թէ շատ ուսումնասէր և կարգացող էին, և իրենք զիրենք ալ շատգետ համարելով զօտարները հպարտութեամբ ծաղրէին. հաւանօրէն այս գարս էր իրենց գիտնականութեան ամենէն ծաղկած ատենն։ Այս ատենս ծաղկած կարծեմք (վասն զի ասոյց թուական կամ յիշատակ մը չկայ) Վարդան Անեցի վարդապետն ալ, որ ծանօթ է միայն նոր օրինակ իսկապիւ պաշտօնական գրուածով մը « Վասն Կառաց Աստուածութեանն, « ներբող »։ գրուածն արձակ է, այլ տուն տուն նման գանձի, որոյ փոխան ինքն նորալուր կուչում մը կու տայ, անագլուխ տառերովն կապելով զայս բան։ Անշի Վարդան Վարդապետի Երգէւէի. յորմէ տեսնուի ալ որ 28 տուն է. առաջին 4 տունքն Աստուծոյ կառաց վրայօք, այն կառաց՝ զոր Եղեկիէլ մարգարէն տեսաւ 'ի տեսլեան. մը. նացեալ 24 տունքն վեց վեց բաժանին 'ի վերայ չորից կենդանեաց որք զկառք քաշեն. Մարգն, Առիւծն, Եղն և Արծուին. մէկ մէկ տուն նկարագիր նուիրած է իւրաքանչիւրին տնձին. Կերպարանքին, ձեռքին, ոտքին, շունչին, Էղջիւրին, և այլն. և զամենքն ալ Քրիստոսի օրինակ գրելով՝ պատկառանք կը խօսի. այլ հանդերձ ա. մեն աստուածաբանական խորատեսութեամբքն՝ գերազանցէ բանաստեղծութեամբը, Նարեկա.

¹ Հիմայ Ղբշախ կ'ըսուի, և է Անոյ մօտերը։

ցւոյ հանձարագիտութեց նման, թերևս և աւելի¹։ Յայտ է որ այսպիսի խորիմաստ գրուած իրեն լաւագոյն մ'ալ կը պահանջէր, և այս ալ գրուած է²։ այլ մեր գիտելիքն ամեն բանէ վեր՝ ազատական մտօք և սրտիւ ոճն է Երգելիս։ որ գուշակել տայ Անոյ հանգրստեան և զուարճութեան օրերը, յորս չէին լռեալ յայն քաբայ և Բոթիսի Լեփայ, զորս հառաչանօք ողբայր երբեմն լսողն և ապա փնտռողն Արիստակէս Լաստիվարացի։ Անոյ հաղարուակէ կեկեղեցեաց և հարիւրաւոր աշտարակաց միջոցէն ոչ միայն աղօթից մաղթանք և զինուոց շառաչիւք, այլ և շատ հանձարոյ և սիրոյ բարձր ու վառվառն թախիք սրացեր են։ և ողբալի աւերակքն՝ շատ սխրալի սրտից և երկնաճեմիկ ճակատուոց վրայ կը հանգչին։

Այս պարագայիս Հայոց ամենէն արեւելեան մէկ մեծ քաղաքն ալ Գանձակ, Անոյ պէս առանձին ինքնագլուխ Պարսիկ իշխան ունէր, և իբրև մայրաքաղաք չէն էր ամենայն բարեմասնութիւն, որոց մէջ երեւի և ուսմանց մասին գերազանցու-

1 Ի զբոսանս բանասիրաց՝ դեմք հօս մէկմէկ տուն յիւրանքաշիր կենդանեաց նկարագրեն։ (Ի յետոյ կամ 'ի լաւիկ Մարգարէ)։ — Անմարմին գուարթուն և անգորգար երգեցիկ սիրեցելոյն։ 'ի մատունս իմանալեացն՝ բերկրական բարբառ և աւետարներ տաւիլ։ 'ի լեզուս պարուցաստեղացն ազգեցուծեանն զոյց, և զարթուցման ձայն յօդեալ։ 'ի նուրբ շունչս հողմոց՝ բանական ծով, և պատարասական նաւ՝ զոհար բեռամբ, և նաւահանգիստ ամենառատ, իստուն բուրաստան և ծաղիկ անթաւամ ծածկեալ 'ի ծոց զլսուհւոյ մօր Սիոնի։ հրաշարեր և կաթնաբուխ բանին ստինք՝ 'ի շրթունս աշակերտեցելոյ երկնաւոր մատենագրին։ Չոր Բանիդ աշակերտելովք աղայեմք, զտիպ հարազատիդ, զի ջամբեսցես առ իս ըզկաթնդ բանական, միշտ և յարածամ։

Ի յետոյս սուրբ՝ Արիստակէս։ — Բարուն իմանալի մեքենայիցն՝ ձեռք չորս, որ ունի զվեճն անկեան և զհամատարած լարն վիճակի, որով շարժէ զճախարակ քրտի, և մատամբն ոսկի յօրինէ զպարս աստեղացն, որով հիւսէ զծիրանին և զերկնագոյնն վասն անխախտ և խօսուն խորանին, սկզբնատալին և անփոփոխ օրինագրին, որ և շարժէ զտապանակ ինքնաշարժին։ յորոյ ձեռքին՝ բնաւ էակքս 'ի կայս պահին, կապեալքն լուծանին, և գուանցն հօտքն մակաղին 'ի մէջօրէի առ լերամբն, յորում քարկոծին զլացեալքն։ Չոր և մաղթեմ գնեմամք գառնեցդ, զի առ շինուած սրբոյ խորանիդ՝ պահեսցես զիս միշտ և յարածամ։

Ի լաւիկ սուրբ՝ Իլին։ — Տեսակաւ գիմացդ և հարաւարեր շնչովքդ լինի փախուցեալ հիւսիսական սիգ։ որթք սաղարթապարք և տունկը խնկարերք 'ի քէն շնչաբերեալ անձախապէս բուրեն։ ձաք զարնարերք և ծիծուռք վճիռնաձայնք 'ի ձայնելք վճիռն առեալ զգարունն յաւիտենից ճշեն։ զոր մաճակալք և պղծեզործք անկարացան, առ 'ի կթել յերկնաթախ բարունակէդ՝ որ երբ պտուղ զպարս աստեղացն և զգունդս հրշտակացն։ զոր լծով քո քրանշելի և լծակցովք զարմանալի առ գուր հնձանին ժողովին և ճմին 'ի ծոց մեծի արքային։ Չոր և համարելով իմ զքանակալի դեմագ սրբոյ Իլինդ, զգարնանարեր և զկենդանարար Դունչդ՝ պահել առ իս աղայեմ միշտ և յարածամ։

Ի լաւիկ Արիստակէս։ — Գործնականի և անտանելի հողմոյ ինի կրողիդ, շնչակալ և բոցայօգ գործնականացն վեհիցն 'ի վերայ կացողիդ, 'ի թախի պաշտօնաւոր աստեղացն՝ կէտ լուսաբաշխ, և շունչ պաշտելոյն ազգեցուծեման։ 'ի տարակոյսքն զայոյ հողմոյն՝ յայտնութիւն սաստիկ հնչմամք։ և վառեալք առ 'ի սիրտ անկրկելի նաժուկաց, և 'ի ծփանս ծովու թալուռն աւետարեր, և նաւ կենդանի՝ բարձեալ միջողմամք։ զոր աստղաճաճանք և հարաւարելութեան ծառք գոյով միշտ ժողովարան։ Վասն որոյ և զպատուելի զթեւադ սուրբ աղայեմ, թալուցեալ զիս 'ի խորոցս՝ և յանապատգ սիրոյ ինձ զազարել միշտ և յարածամ։

2 Մեր ձեռք միայն սկզբնաւորութիւնն հասած է, որ բնագրին պէս տուն տուն բաժնուած կարծուի։

Թիւն։ այսպէս դատելով իր ընծայած և պահած երեւելի վարդապետներէն։ Ինչպէս էին մեծահոգան Յովհ. Սարկաւազ, և ընկերակիցքն Դաւիթ Դրդի Ալաւայ, որ կանոնական զիւրք մը գրեց քաղաքակից Արքայութիւն անուամբ նորընծայ քահանայի մը խնդրանօք։ և Գրիգոր՝ Թաթևէի ուրի, Ընթերցուածոց գրոց մեկնիչ։ և ասոր ընկերն Սարգիս Վր. ճգնաւոր և գլուխ վարդապետաց ժամանակին¹։ որոց յետ յիշուին նոյն Աղուանից կողմերը Խոնկայ Դրդի Պետրոս վարդապետ մը, և Ստեփէն Յովհ. վարդապետ մը, և այլք։ Ասոնցմէ քիչ վերջը և դարուս ետքերը փայլեցաւ և ամենէն անուանի եղաւ Միլիթ Գու, որ իբրև գերազոյն քան զայլ՝ Մեծ Վարդապետ կ'անուանէր, և ԺԳ դարուն սկիզբները վախճանեցաւ, յետ հիմնելու Նոր Գետիկ վանքը, որ և ուսմանց նոր վարժարան մ'եղաւ։ և յետ հրատարակելու յաւին 1184 իր նշանաւոր Բաբախանայ գիրքը, և յըստակաւ ու հանձարեղ Առակքը, հանգերծ ուրիշ շատ գրուածովք։ Իր ատենին և կողմանց պատգամատուն էր՝ 'ի խնդրոյ ամենուն, Չաքարիայ մեծ սպարապետին խոստովանահայրն, բարեխօս ու բարերար ամեն վնացելոց և նեղելոց։ Բայց ինքն իր շատ հմուտութիւնները և վարժմունքը զանազան վանորէից և քաղաքաց մէջ փնտռեց, 'ի Գանձակ, յԱնի, Տփղիս, Կարին, Չորոյ գետոյ վանքերը և ինչուան յարեման հայտ ալ գտաց, ծածկելով իր վարդապետ ըլլալը, և գուցէ Շնորհաւոյ ալ կամ գոնէ անկէ վարժածներուն աշակերտեցաւ, և ապա վարդապետաց վարդապետ եղաւ։ վասն զի իրմէ սկսած կամ նորէն սկսած կը սեպէին յետին դարուց վարդապետք՝ իրենց վարդապետական գաւազանի յաջորդութիւնը։

Բայց առաւել քան զԱնի և զԳանձակ, և զվանս Գետիկայ և անոր մօտ Հաղարծին² և ուրիշ վանքերը՝ անուանի եղան իբրև վարժարան և գիտնարան՝ մեր ձախից և զուգավիճակ և իբր երկուորեակ Վանքն Հալապ և Սանահին։ Ժ դարուն կիսուն հիմնեալ, հետ զհետէ Բաբախանի և Վրացի թագաւորաց և Չաքարեանց և ուրիշ իշխանաց առատաձեռնութեամբ շէնցան, մեծցան, ճոխացան, մեծաթեմ եպիսկոպոսօք ալ շքեղացան, և բաղմամբիւ միանձն և վարդապետաց կայանք և օթեմանք եղան։ բաղմաց ալ իբրև համալսարան ուսմանց տեղիք։ Այսպիսի պաշտպանաց, փառաց, և գիտութեանց համար՝ յիրաւի փառասէրք, հըպարաք, անհաւանք, կէս գիտնականք և իմաստակք ալ շատ եղան հօն։ այլ եղան և ընտիրք վարուք և գիտութեամբք ոչ սակաւ՝ ԺԱ-ԺԳ դարուց միջոց։ և ամենէն աւելի այս ԺԲ դարուս յորում Շնորհաւոյ ալ շնորհքով թղթակիցներ ունէր 'ի Հաղբատ, ինչպէս որ անշնորհներ ալ ունեցան՝ յաջորդն Գր. Տղայ և Լամբրոնացին։ Ի կարգի պատմութեանս պիտի յիշեմք Շնորհաւոյն թղթակիցները, Գեղարք Հաղբատայ առաջնորդը և Վարդան գովանի վարդապետը։ Նախընթաց դարուն մէջ (ԺԱ) աւելի ծաղկած կ'երևի

1 Այս երկուքս ալ Գանձակայ ժամով փլածին մէջ մեռան, զոր յետոյ պիտի յիշեմք։

2 Ասոր առաջնորդ էր Գուր ժամանակակից Խաչատուր Տարօնացին, որ հայկական երգոց իւզերը նորոգեց կամ մոտոց յարեց, ուր խափանուած էր։ և երգեց Պատարագի գեղեցիկ նախերգանքը, « Խորհուրդ Խորին »։

Սանահին վանքն՝ Դեմոփոս գիտնական և արժա-
նաւոր անձին առաջնորդութեամբ, զոր Պետրոս
Գեառքարձի տեղ կաթողիկոս գրին և ապա շու-
տով ձգեցին, երկու կողմանէ ալ տհաս ընտրու-
թեամբ և հաւանութեամբ, յորմէ սրտացաւու-
թիւն և մահ պատճառեցաւ Դեմոփոսայ: Իր ա-
շակերտաց մէջ անուանի եղան Անանիա Սանահինցի,
որ Պօղոսի Առաքելոյ թղթոց մեկնութիւն մը գը-
րեց համառօտ, ըստ ոմանց և Մատթէի աւետա-
րանին մեկնութիւն, և Երկաթնակաց կամ Յու-
նաց գէմ գրուած մը, յորում շարագրութիւնն
կըրնայ ընդունուիլ՝ այլ ոչ ոգին և կարծիքն: — Եւ Յու-
նոց Սանահինցի որ և Քաթաֆնցի կամ Քաթաֆայ ու-
ղի, որ ընդ հակառակն աշակերտակցին՝ ի Կ. Պօ-
ղոս Կոստ. Դուկաս կամ Տուկիժ կայսեր՝ Քրիս-
տոսի բնութեանց խնդրոյն վրայօք Յունաց համա-
ձայն դաւանութիւն տուաւ (1060). զոր Գա-
գիգ Բ Թագաւորոյն Թագաւորն ջնդուեցաւ,
նեղանալով վարդապետին, իբրեւ թէ ինքն իր
գլխով առանց ազգին մեծամեծաց հարցնելու
գործեր էր. թէպէտ և իրեն պէս Թագաժառանգ
Արծրունիք Աստված և Աբուսահլ իրենց աստուա-
ծաբան բերան ընտրէր էին զնա: Ասոր երգածն
կարծուի « Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնար-
« հեալ » հանգստեան, (ԳԿ) շարականը, որ ի
Ճաշու ժամուն երգուի: Սա իր ծերութիւնն ան-
ցուց յԱւրհա քաղաքի, ուր և անկողինն մէջ մե-
ռաւ կամ սպանուած գտուեցաւ (յամին 1085).
տեղւոյն հուշակեալ Տարեգրողն (Մատթ. Ուսհ.)
կոչէ զսա, « այր հզոր կորովի. սորա հասեալ ի վե-
« ռայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ. ու-
« սեալ և հասեալ սորա ի վերայ հռետորական ի
« մաստութեցն, և տեղեկացեալ ամենայն փիլիսո-
« փայական խորին գիտութեցն... Լացին զնա ա-
« մենայն սիրելի մերձաւորք իւր, և արարին ժո-
« ղով զամենայն քաղաքն Ուսհա ի վերայ նորա. և
« մեծաւ հանդիսիւ Թաղեցին զնա ի դուռն սուրբ
« եկեղեցւոյ իւրոյ, ի հիւսիսեան կողմն քաղա-
« քին, իբրեւ նեաղնկեց մի հեռի ի պարբասէն »:

Յաջորդ գարունն (ԺԲ) և մեր պատմական պա-
րագրին և անկէ ետքը՝ առաջնութիւնն տուաւ
Հաղբատ, յորում ցկէս ԺԳ գարուն յիշուին գիտ-
նական վարդապետք, այլ քան զնաւ գերազան-
ցեց և իբրեւ ի ծայր գովութեան հասաւ նախայի-
շեալն Յովնանէս Սաբաւագ, որ ծննդեամբ էր Գան-
ձակեցի կամ ի Փառիսոս գաւառէ Արցախոյ, այն
ատեն Գանձակայ իշխանութեան տակ, քահանա-
յական ցեղէ. ԺԱ գարունն կիսուն ծնած և 1129ին
վախճանած. և ինչպէս երեւի 40 կամ 50 տարի մը
աշխատած է գրաւոր երկասիրութեամբք, ան-
թիւ գրքեր կարդալով գիշեր և ցորեկ, մինչև ամ-
բողջ օրեր՝ առանց ուրիշ բանի զբաղելու. թուի
թէ և յունարէնի ալ տեղեկութիւն ունենալով
և արեւելեան լեզուաց: Առանձին ոճ մ'ունի գը-
րութեան, իմաստասիրական, ոլորուն, սուր և
սիրուն, և խրթնութեամբն հանդերձ յստակ:
Շատ բան գրած է արձակ, քիչ մ'ալ ոտանաւոր
և շարական, ճառեր և աղօթքներ, պատմական,
բնական և սոմարական, և աստուածաբանական.
ամենքն ալ իր հոչակուած անուան արժանի, և
ինչպէս պատմիչք կ'ըսեն՝ սորա ամեն խօսքն ալ
Գրիգ. Աստուածաբանի ոճոյն պէս արուեստա-
բան և վսեմական է. անոր համար Մեծ Խոսքաւոր

և Սոփեփէս կ'անուանի. գերեզմանին վրայ ալ ի
Հաղբատ գրուած է « Արձանս այս սեմական է
« Սոփեստոսի Սարկաւագին »: Մէկ մեծ ար-
դիւնքն ալ է Տօմարի նորոգութիւն մ'ընեն, և
անշարժ տարիով տօները հաստատեն, որ Սաբա-
ւագի խաչ ըսուեցաւ, որում հետեւին Յայսմա-
ւուրք. և այս կարգագրութեան սկսաւ նոր Թուա-
կան մ'ալ ի 1084 տարւոյ Քրիստոսի, յորում
Հայոց մեծ Թուականէն (552) սկսեալ առաջին
շրջանն հինգհարիւրեկին կ'աւարտէր. Սարկա-
ւագ ցըցուց որ հին Հայք ալ շարժուն և անշարժ
տարիները գիտէին կանոնել Հայոց Շրջան անուա-
նեալ պարագայութեամբ, հին Եգիպտացւոց Առ-
թիական կամ Շնկան շրջանին նման. իր Թուա-
կանն կոչեցու Նօր կամ Մարտի. և ԺԲ գարուն
գրեալ ձեռագիրք ի Հաղբատ և մօտերը՝ շատ հեղ
այս Թուականս կը գործածեն: Աստուածաբանա-
կան խնդրոց մէջ Շնորհալոյ և Լամբրոնացւոյ ուղ-
ղատեսութիւնը կամ զիջողութիւնը չունի. այլ ոչ
ալ Անանիայի կամ ուրիշներու նման Թշնամա-
խօս. և թէ քիչ մ'ալ աւելի կամ ուշ ապրէր, և
Գէորգայ ու Վարդանայ պէս բաղդ ունենար Թղ-
թակեցելու ընդ Շնորհալոյ կամ տեսնուելու,
յուսալի էր որ իրեն պէս սրամիտ և բարեսէր
անձն՝ կըրնար նախ իր միտքը բոլորովին հաստա-
տել, և ապա արեւելեան կամ հիւսիսային ըսուած
վարդապետաց ալ, որք իր խօսքէն դուրս չէին
էնէր, առաջնորդել ի միաբանութիւն: Յաւալի
է որ իր գլխաւոր գրուածոց մէկն գեւ չէ գտուած
մեր օրերս, թէ և յուսացուի գտուիլ, և է իր
Պափոսիանն, յորում ստոյգ քննութեամբ Սէջու-
կեան Թուրքաց ծագման և տիրապետութեան
վրայ կը խօսէր, մինչև ի մահ Մէլիք Շահի և անոր
ժառանգաց պայազատութիւնը. Սամուէլ Անե-
ցի իր աշակերտն՝ քանի մը հատուած պահած է
այս պատմութեան՝ իր ժամանակագրութեան
մէջ¹: Միայն այս հեղինակս է ի ժամանակա-
կիցս՝ որ կըրնայ կշռուիլ Շնորհալոյ հետ, և
տաղանդոյ ու հմտութեանց ուժով գերազանցել
իսկ, և խոյանալ իրեւ զարծուի նաև իր ժամա-
նակէն բարձր. այլ Ներսէս դարձեալ իր հոգե-
շնորհ արծաթապատ աղանձեկան սուր և սուրբ
թեօք՝ կշռաչափ ընթացքին մէջ՝ ոչ կը Թուշնայ
ոչ կը ցածնայ, և իր ջերմագոյն հոգւովն աւելի
հայր է Հայաստանեայց՝ քան թէ Սարկաւագն
գաստիարակ բանասիրաց:

Յետ յիշելոյ այսպիսի հանձար մը ի հոչակա-
ւոր և յայրապապ կոչուած Հաղբատ, աւելորդ
սեպեմք ուրիշ երկրորդական վարժապետներ և
վարժարաններ ալ փնտռելու, և դառնալով մեր
բուն նպատակեալ պատմութեան:

¹ Սարկաւագայ վրայ առանձին տեղեկութիւն մը հրա-
տարակուած է յ'Բ Հատ. Յուլիք Հայրենեաց, 279:

Կը շարունակուի: